

# Անցկացվեց «Կորյուն», ռազմամարզական խաղի մարզային փուլը 26.02.2018

Փետրվարի 23-ին Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցում անցկացվեց «Կորյուն», ռազմամարզական խաղերի մարզային փուլը, որին մասնակցեցին տարածքային փուլում հաղթած Կարմիրգյուղի թիվ 2, Զուլաքարի թիվ 1, Դոմաշենի, Սոթքի միջնակարգ եւ Ճամբարակի ավագ դպրոցների թիմերը:

Ռազմամարզական խաղերի մարզային փուլի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցեցին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը, ՀՀ Պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանը, ՀՀ ԿԳ նախարարության ռազմամարզական վարչության պետ Արթուր Կարապետյանը, Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ Գարիկ Բադալյանը, հանրակարթական դպրոցների նախնական զինվորական պատրաստության ուսուցիչներ: «Շնորհավորում եմ բոլորիս Հայրենիքի պաշտպանի օրվա կապակցությամբ, մաղթում խաղաղություն, մեր սահմանները պաշտպանող զինվորներին ու սպաներին՝ անվտանգ ծառայություն: Համոզված եմ, որ այսօր ռազմամարզական խաղերի անցկացմամբ մենք ականատեսը կդառնանք հայրենասիրական բաց դասի ցուցադրությանը», -բացման խոսքում նշեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը:

«Մենք պետք է անենք հնարավորը, որպեսզի մեր վաղվա զինվորները բանակ մտնեն ռազմական գիտելիքների բավարար պաշարով: Այս ռազմամարզական խաղերն էլ ծառայում են այդ կարևոր նպատակին», -նշեց ՀՀ ՊՆ խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանը:

Ռազմամարզական խաղերի մեկնարկից առաջ մասնակիցներն այցելեցին Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ռազմագիտության կաբինետ և ծաղիկներ խոնարհեցին նույն դպրոցի աշակերտ, հայրենիքի պաշտպանության դիրքերում զոհված Զոհրաբ Բալարեկյանի փառքի անկյունում:

Այնուհետ 8-11-րդ դասարանների աշակերտներից կազմված թիմերի միջև պայքարը ծավալվեց «<Արագ եւ դիպուկ>>, «<Բանիմաց եւ հնարամիտ>>, «<Ամենագետ եւ խելացի>>, «<Կարգապահ եւ ներդաշնակ>>, «<Բարձունքի գրավում>> մրցաձեւերում: Աշակերտներն իրենց ռազմական գիտելիքները եւ կարողությունները ցուցաբերեցին շարային պատրաստվածության, հրաձգության, նոնակի նետման, ինքնաձիգ գեղքի քանդման ու հավաքման, էստաֆետային տարբեր վարժությունների, օդային տագնապի արձագանքման, առաջին բուժօգնության կազմակերպման եւ այլ ստուգատեսների ժամանակ:

65 միավորով առաջին տեղը գրավեց Ճամբարակի ավագ դպրոցի թիմը: Նրանից ընդամենը մեկ միավոր պակաս վաստակեց Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը: Երրորդ տեղը գրավեց Զուլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը՝ վաստակելով 59,6 միավոր: «<Այսպիսով, «Կորյուն», ռազմամարզական խաղերի հանրապետական փուլին մասնակցելու հայտ ներկայացրեց Ճամբարակի ավագ դպրոցի թիմը, որի կազմում կարող են ընդգրկվել նաեւ մյուս թիմերում աչքի ընկած աշակերտները՝ կազմը ուժեղացնելու նպատակով» - ներկայացրեց գլխավոր մրցավարը: Ռազմամարզական խաղերի կազմակերպման ու ակտիվ մասնակցության համար հաղթող թիմերը պարգևատրվեցին ՀՀ ՊՆ և Գեղարքունիքի մարզպետի պատվոգրերով: